# «Պետական սեփականություն հանդիսացող հատուկ մշակված համակարգի (բջջային հավելված) տեխնիկական բնութագիրը (նկարագրությունը, ինտերֆեյսը) և դրանից օգտվելու կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**N ______-Ն**

**ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՏՈՒԿ ՄՇԱԿՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՏԵՐՖԵՅՍԸ) ԵՎ ԴՐԱՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 7.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել՝

1) պետական սեփականություն հանդիսացող հատուկ մշակված համակարգի (այսուհետ՝ բջջային հավելված) տեխնիկական բնութագիրը (նկարագրությունը, ինտերֆեյսը)՝ համաձայն N 1 հավելվածի,

2) բջջային հավելվածից օգտվելու կարգը՝ համաձայն N 2 հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բջջային հավելվածը շահագործման

հանձնելու օրվանից, բայց ոչ ուշ քան 2021 թվականի հունվարի 1-ը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ն.ՓԱՇԻՆՅԱՆ**

**2020թ. ___________ «____»**

**Երևան**